Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԹԻՎ 22-Ա, 23-Ն, 24-Ա, 31-Ա, 33-Ա, 35-Ա, 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի թիվ 22-Ա որոշման հավելվածում նշված օրակարգային հարցերի հեղինակները չեն կարող համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ լինել:

Թիվ 23-Ն որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 24-Ա որոշմամբ հաստատվել է միայն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

Թիվ 31-Ա որոշման հղումները սխալ են կատարված: Որոշման 2-րդ կետով սահմանված բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին, համաձայն որի գնում կատարելու նման ընթացակարգ նախատեսված չէ:

Թիվ 33-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներին, համաձայն որի համայնքի ավագանին ոչ թե թույլտվություն է տալիս, այլ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման ժամկետը և նպատակը:

Թիվ 35-Ա որոշման մեջ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմանը կատարված հղումը սխալ է գրառված:

Թիվ 37-Ա որոշման 2-րդ կետում անհրաժեշտ է «ստորագրման պահից» բառերը փոխարինել «հրապարակվելուց հետո» բառերով:

22.04.2020թ.